

## ԴԵՌԱՅԱՍՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

**Սարգսյան Գ.Ռ., Հայրապետյան Ա.Կ.**

Երևանի Մ. Զեդեգու անվ. պետական բժշկական համալսարանի առողջապահության կազմակերպման և բժշկական իրավունքի ամբիոն, Երևան, Հայաստան

Դեռահասների սոցիալական և հոգեբանական դեգադապտացիան՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխություններին, սեռական դաստիարակության բացակայությունը պատճառ են դառնում ռիսկային սեռական վարքագծի դրսևորման: Վաղ սեռական կապերը, սեռական զուգընկերների հաճախակի փոփոխությունը, առանց հակաբեղմնավորիչների սեռական հարաբերությունները, պատճառ են հանդիսանում սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդությունների տարածվածությանը, փոքր կոնքի օրգանների բորբոքային հիվանդությունների զարգացմանը, անցանկալի հղիությունների, ինչն էլ հաճախ ավարտվում է աբորտով կամ վաղ մայրությամբ: Դեռահասության տարիքում ձեռք բերված սեռական ինֆեկցիաները, աբորտները, վաղ մայրությունը, վերարտադրողական համակարգի բազմաթիվ օրգանական և ֆունկցիոնալ խանգարումները պատճառ են հանդիսանում և հետագայում բացասաբար անդրադառնում ապագա հղիությունների ընթացքի, սերնդի առողջության, հայրության հնարավորության վրա: Դեռահասների վերարտադրողական առողջության վիճակը կարելի է դիտել որպես խիստ զգայուն յուրօրինակ ինդիկատոր՝ արտաքին և ներքին միջավայրերի փոփոխվող գործոնների նկատմամբ:

Հայ դեռահասը, այսօր սոցիալիզացիայի ոչ դյուրին փուլում է: Մի կողմից արագ փոփոխվող սոցիալ-տնտեսական իրավիճակը, քաղաքական փոփոխությունները, մյուս կողմից՝ ինֆորմացիայի բազմազանությունը, ուսումնական հաստատություններում սեռական կրթության բացակայությունը, սեփական փորձով սովորելու ձգտումը ստեղծում են պայմաններ՝ վաղ սեռական հարաբերությունների և ռիսկային սեռական վարքագծի դրսևորման: Դեռահասի ռիսկային սեռական վարքագիծը անդրադառնում է նրա վերարտադրողական առողջության վրա և, այս դեպքում, հասկանալի է խոսել վարքագծի փոփոխության մասին, ինչը համոզիչ լինել չի կարող: Դեռահասի սոցիալիզացիայի գործընթացում ռիսկային գործողությունների պատճառով շատ արգելքներ են առաջանում: Սակայն ակնհայտ է, որ նպատակահարմար չէ ուղղորդել «Որքան դեռահասի վարքագիծը պակաս ռիսկային է, ուրեմն հեշտ է կատարվում սոցիալիզացիան» դրույթով, նկատի ունենալով, որ ռիսկային վարքագիծը նախ և առաջ դեռահասության տարիքի հոգեբանական բնութագիրն է: Այսպիսով, ռիսկը համարվում է անհատի և հասարակության կենսագործունեության կարևոր բաղադրիչը: Ստացվում է, որ ռիսկային վարքագծի իրականացումը նպաստում է դեռահասին դրական կամ բացասական փորձի ձեռքբերմանը՝ ժամանակակից անորոշ դրություններում և հետևաբար անհրաժեշտ է ցուցաբերել դիֆերենցված մոտեցում՝ նրանց ռիսկային վարքի գնահատման գործում: Վերոնշյալից հանգում ենք հետևյալ եզրակացության. դեռահասության տարիքում ռիսկային վարքի ֆենոմենի նկատմամբ միակողմանի բացասական վերաբերմունքը և նրան նպատակային մեկ այլ ֆենոմենով փոխարինելը չեն տա նկատելի արդյունքներ: Ռիսկային վարքի ֆենոմենի նկատմամբ ռացիոնալ մոտեցումը կնպաստի դեռահասի ճկուն ադապտացիային:

Կարծում ենք, որ սեռական վարքի ռիսկերի ճիշտ կոորդինացիայի կարելի է հասնել սեռական դաստիարակության միջոցով, ինչի արդյունքում դեռահասի մոտ կձևավորվի իրականացրած վարքի հետևանքների համար պատասխանատվություն:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY